

Դ. ՂՈՆՆԿԻԱՆՈՍ ՀԱՐԻՒՐԱՊԵՏԻ ԽՈՐԱՆԸ

Հայ, յոյն և լատին Յայտմաւուրքները կամ Տօնացոյցները երկու անձեր կ'ընդունին, Ս. Ղունկիանոս հարիւրապետ եւ Ղոնկինոս զինաւոր, եւ երկուքին ալ վկայաբանութիւններ կան Ճառընտիրներուն մէջ. Տօնացոյցները առաջինը այսպէս կը նշանակեն. «Ղունկիանոսի հարիւրապետին որ հաւատաց ի խաչելեալն Քրիստոս». իսկ երկրորդը սա խորագրով. «Վկայաբանութիւն սրբոյն Ղոնկինոսի հարիւրապետի և վկայի» և կը պատմեն թէ ինքը խոցեց Յիսուսի կողը եւ տեսնելով պատահած հրաշքները՝ հաւատաց. այնպիսի պատմութիւններ գրուած են որ կը տարբերին հարիւրապետին վկայաբանութենէն՝ զոր գրած է երուսաղէմացի Իսիւքիոս երէցը (+ 451) : Ղունկիանոս հարիւրապետի վկայաբանութեան մասին Իսիւքիոս երէց կը գրէ թէ ինքը շատ աշխատած ու պրպտած է գտնելու համար վկայաբանութիւնը Ղոնկիանոս հարիւրապետին, որ Քրիստոսի խաչին մօտ գտնուած ըլլալով ըսաւ թէ արգարեւ Աստուծոյ որդի էր սա. նոյն վկայութիւնը գտած է Ս. Յարութեան տաճարին մէջ գտնուած մատենագրանին գիրքերէն միոյն մէջ եւ գրած է անոր մասին ներքոյեան մը (Լ. Վ. Ս. Է. էջ 320, 334) : Որքան որ վկայաբանութիւնները զատ զատ անձեր կը նկատեն Ղունկիանոս հարիւրապետը և Ղոնկինոս զինաւորը, Սուրբ Երկրին մէջ մէկ անձ նկատուած են անոնք և որուն անունով կանգնուած է խորան մը Ս. Յարութեան տաճարին մէջ : Քրիստոսի բանտէն յիսուն եւ հինգ ոտք հեռու կը գտնուի նոյն խորանը՝ մատուռի մը մէջ. ի հնումն խորափիտ այր մ'էր, ուր հարիւրապետը տեսաւ բազ-